

ներքեւն, եւ թաղուհին ի վերայ կայր նստած: Եւ կայր ի գիրկն թագուհւոյն տախտակ մի ոսկի, եւ լաւ թաղարով շատ խորամ իր գրած ի նմա: Եւ կարգաց ալեւորն, եւ էր այսպէս. Ով զիս տեսանէ՝ ինչ իւրն որոքմի եւ խրատուի: Եւ տասնութ շրջա տարեկանն, որ մեռաւ: Մահն ոչ ի թագաւորէն կու երկնի եւ ոչ աղքատին կու իրնայ: Իս՝ Ջօրմի թագաւորին գուտը իմ, Ծառաւ մեռաւ իմ մայրն, եւ եւ հինգ տարեկան էի. եւ ապա մեռաւ հայրն իմ, եւ եւ տասն տարեկան էի: Կարայ զալծող. թագաւորութեան, եւ զթագաւորութիւնն վայելեցի հինգ տարի: Բայնժամ հասաւ ինձ մահն, եւ կործանեաց զթագաւորութիւնս իմ: Բարաքս երկնայափ առաեղքը է շինած եւ որչափած. զերզ զսա մտեր զարդաց այլ չկայ ի վերայ երկրի: Ով որ մտնէ ի սա հրամանսն Մատուժ, գանձը շատ է. առէք որպիս որ պիտոյ է. բայց զայս որ յիմ վերայ է՝ մի առնուք վասն Մատուժոյ վերան համար: Այսպիսի իրար որ յիմ վերայ է՝ ինձ թողէք, ի յիմ ամէն թագաւորութենէս ինձ թողէք զայս եմ առեցի: Երբ մեղացեցանք զանկ յԱստուած կենդանի, որ վախճանայ յԱստուծոյ, եւ չառնէք իմ մարմնոյս զիս, եւ զիս յիրար տայք եւ խռոքէք:

Գ. Գնացին ժողովեալն քառասուն օր, եւ տեսան բարձր բուր մի, եւ ի բլրն տեսան սեւ մարդիկ այլաբէն, եւ ի տակ բլրին տեսան քար տներ: Եւ իբեւ Ափրիմուսէն անդ: Եւ վախեան այն սեւ մարդիկն: Եւ զնայ ալեւորն ձայն երես եւ հատարոյց, եւ զնային սեւերն բերին զիւրեանց թագաւորն առաւրջ Ափրիմուսէն: Եւ տեսան կերան եւ արքին, եւ ուրախ եղին: Բայնժամ կէսցալ ալեւորն ցտեւ թագաւորն թէ Այն կուծեալն որ Սողոմոն զղեւն ի ներս էած եւ ի ծովն ձգեաց՝ աստ կու գտանք թէ ոչ: — Անէ սեւ թագաւորն. Որչափ որ պիտոյ է իմալի համար թող բերեն մեր որսորդքն, բանան զվճիկ բերանն՝ որ տեսանէք: Ասաց Ափրիմուսէն՝ թէ Մէք այն կոծեալն համար եմք եկեր յայտն ձանապարհայն: Բայնժամ՝ հրամայեաց թագաւորն որսորդացն, որ զնային բերին տասնուերկու հարկ առաւրջ Ափրիմուսէն: Եւ երբ տեսաւ Ափրիմուսէն՝ յոյժ ուրախացաւ, եւ երկր զվճիկն ի յստիկ սնդուկն իւր, եւ շատ ապուր. արար թագաւորին: Եւ ետուր նմա շատ օսիկ եւ աւուրք եւ ամառիկ ձիանք: Եւ շնորհակալ եղեւ թագաւորն եւ ոչ երբ: Ասաց թագաւորն թէ Ոչ պիտի մեզ այդ, զի մեք ոչ ձիանք եւ ոչ զնեմք եւ ոչ ի մի հեծուուք: Մերն այն է՝ որ արա առնէք, զմիս ուտենք եւ զմերթին հագնինք:

Թագաւորն երկու լաւ մարդ ի հետ եղիւր Ափրիմուսէն, եւ շնորհակալ եղին միմեանց եւ ողբունեցին զիրար: Եւ նորա տարան դնտա կարճ ձանապարհով ի յերկիրն կանանց թագաւորին, Տարաւ Ափրիմուսէն զպէւտրն առաջին թագաւորն եւ շնորհակալ եղեւ ասեղով: Այս ի քննէ է, որ զայս իմաստուն ձեռք ի հետ մեզ գրիւր, որ տարաւ զմեզ եւ երբն: Եւ եօթն բարձած ուղտ օսիկ ետուր ալեւորն, եւ թագաւորն ուղտեան զնեմք, եւ զԱփրիմուսէն լաւ պատուեաց, եւ զորքը ձիանա ետուր եւ ուղարկեց ի Սոր, եւ ասպա եղան ի Սորայ, եւ եկին ի յայնաբն իւրեանց եւ հաօրն ի Պաղատա:

Աստ կը գլխաւորենք հետազոտութիւնքս ի մասին յարաբերութեան հայերէն Առախաց՝ հնդկականաց հետ: — Ար ձաննանք որ թերակատար է գրութիւն հայերմամբ նիւթական ամբողջութեան. որովհետեւ մեր ընտրած երեք Առախներէն եւ յոնթայս յառաւ բերածներէն զատ՝ կան ի հայերէն հաւաքածոյս այլ եւս շատ Առախ, որոյ

ոմանք վերոյիշեալներուն պէս ի հնդկականաց առախ են, եւ ոմանք՝ անոնց նմանորութեամբ յօրինեալ, զոր եւ ոչ իսկ յիշատակած ենք: Բայց յուսանք որ այս կողմանէ ոչ որ զմեզ մեղադրէ, դիտարկով որ մասնական էր մեր վարձանն, եւ չուէինք նպատակ ամբողջական եւ լիակատար պիտութիւնս յօրինել հնդկի առախագրութեան վրայ, զոր եւ ոչ կը ներեր օրագրայ հատած ի սահմանադրեալ շափն:

Բայց թող յիշատակենք ի զրութեանս, եթէ ոչ աւելի ինչ՝ գէթ ոչ սակաւ անձնորթիւնք: Սակայն ակնունիւնք որ նաեւ յայտմ մասին չեն զանադ մեզ իրենց ներգրավման իմանաւոր մասնագէտք, որ փորձիւ գիտնալով թէ որպիսի հատութեան եւ սրբայի միջոցա կարօտ է գործս, եւ սրբայի նուազ մեր տեղեկութիւնն ու միջոյններն, կը տեսնեն թէ չէինք ի վիճակի խորադիւն եւ ընդարձակաբար քննութեանց ձեռնամուկ լինելու: Միայն մեր անձին դէմ շանթաւեւում համար՝ պարտք կը համարենք յուշելով թէ ոչինչ այլատուութեան խնայած ենք ի կատարելութիւն Առախագրութեանս. ընդ հակառակն՝ ամենայն փութով ջանացած ենք օգտուր գործածել մեր դուրեպեայ միջոյններ:

Գիտենք որ այս շնչին գրուածոյն՝ շատ չնայնդի՝ պիտի յաշորդէ ամենայն մասաբեր կատարեալ մասեան, որ մեծայայտ ենք թէ կը բովանդակէ հայերէն Առախաց վերաբերեալ ամէն տեղեկութիւն, եւ կը մատակարարէ լիութիւն լուսաւորութիւն՝ ուր մենք հազիւ կարողացանք աղտո նշոյլ մի մատուցանել: Այս մեր յայն հիմնեալ է ի վերայ մեզ հմտութեան մասնագէտ Առաջնադասիւն, որ կ'իմանանք թէ կը զգալի ի սոյն գործ, մասնաւոր որ բաց են իւր առջեւն ոչ միայն Եւրոպանի հաշակաւոր մասեանագրարն եւ ոչ միայն մատենագրարն որ հայ ձեռագրաց հարուստ գանձն, այլ նաեւ Եւրոպայի՝ նա թէ բովանդակ աշխարհի մատենագրարն եւ ուսումնարարն: (Տես Հոնքոն Թոմսոն. 1891, էջ 260 եւ 261, Ա. առանձինն՝ Դան. 1.)

Հ. Ղ. Յ.



ԱՅԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՍՆԻՆՆԵՐ ԼՈՒ ԵՆԶԵՆԵ

Ք.

(Հարաւորութեամբ ի մեր)

Եւրոպայի նպատակի իրագործման համար հարկաւոր էր կանխապէս քննել Սեւասայ լճի աւազանը եւ 1889 եւ 1890 տարեկներու մեջ մասնաւոր քննիչ ուսումնական յանձնաժողով ուղարկուեցաւ այն կողմը կառավարութեան կողմէ: Գանձաժողովն ընդարձակ քննութիւն կատարեց Սեւասայ լճի աւազանի վրայ: Այս տեսութիւնը գեոտեքնոլոգի Գորնի Ջորնալ տեսնական ուսումնական մասնութիւն Սպրիտ Մային-Յունիս միացեալ համարներու մեջ հրա-

տարակուսած լինելով, աւելորդ չեմ համարիր ազդից քանի մի կարեւոր ծանօթութիւններ քաղել Հանդէս ընթերցողներու համար:

* * *

Գեղարքայի լիճը, կամ պաշտօնական անուամբ՝ Գօհլա (FORHA) որ հին ժամանակները յայտնի էր «Գեղամայ» կամ «Գեղարքունի» անուամբ, զոր եւ Հայերը «Սեւանայ» լիճ՝ կը կոչէին, կը գտնուի Երեւանեան նահանգի Նոր-Բոյազդիս գաւառի մէջ, հիւսիսային լայնութեան 40° 9' եւ 40° 37', եւ արեւելեան երկայնութեան 62° 41' մինչեւ 63° 22' աստիճաններու մէջ տեղ եւ Կաւկասիոյ ամենամեծ լիճն է: Նորա ձեւն՝ մօտաւորապէս եռանկիւնի է. երկայնութիւնն է 67 վերստ (71 քիլոմետր) եւ ամենալայն տեղը 40 վերստ (42 քիլոմետր): Երկու նշանաւոր հրումարդն ունի միմեանց դիմաց՝ Արմէրէ եւ Նարբէ (կամ Նարառաղ) որոնք զոգցան երկու մաս կը բաժնեն լիճն իր երկայնութեան վրայ: Լճի ամբողջ մակերեսը լիճը կը հասաւորի 1200 քառակուսի վերստի (2700² քիլոմետր): Լճի բարձրութիւնը ովկիանոսի երեսէն 6340 ոտը է (ռուս. կամ որ նոյն է անգլ.): Լճի աւազանը շրջապատուած է Կաւկասիոյ փոքր լեռնաշղթայի սարերէն, որոնք չորս կողմէն կը փակեն զայն. այս սարերը լճի եզերքէն 20—40 վերստ (21—42 քիլոմետր), հեռու են կանգնած: Սեւանայ լճի ամբողջ աւազանը՝ (9500² քիլոմետր) 4177 քառակ. վերստ տարածութիւն ունի, որու 1200 վերստը կը կազմէ լիճն, իսկ մնացած 2977 վերստը կը բաղկանայ լեռնաշղթայի հովիտներէն եւ լեռնակողերէն: — Լճի հիւսիսային եւ հիւսիս-արեւելեան կողմն են լեռնակողերն, իսկ հարաւային եւ հարաւարեւմտեան կողմն՝ հովիտները: Լիճը անունդ կ'առնու գլխաւորաբար այս հովիտներէն հոսող գետակներով, ուր որ լեռնակողերէն միայն փոքր առուակներ կը թափուին իր մէջ:

Լճի խորութիւնը նոյն չէ ամեն տեղ. Սեւանայ կըլլէ քովերն կը հասնի մինչեւ 60 սաժէնի (129 մետր), իսկ լճի մէջտեղերը ամենամեծ խորութիւնն է 290 սաժէն (536 մետր):

Սեւանայ լճի ջուրը անշուշ. է. համը քիչ ծանր է (խիստ), բայց խմելու կատարելապէս

յարմար է: Այս ջրի ֆիսսակարութեան մասին այստեղ տարածած կարծիքն անկող կրնայ յուսալ գալ, որ եղերքի ընակիչներն առհասարակ լճի եզերքի վրայ, ջրի մէջ ձուկ կը մսրեն, եւ ուրիշ աղտոնութիւններ կը թափեն, ուսկից բնականաբար եղերքի ջուրը կ'ապահանի, բայց ընդհանրապէս լճի ջուրը, մանաւանդ լճի մէջտեղերը, բոլորովին թափանցիկ է եւ շատ մաքուր. նորա թանձր խաւերուն մէջ գոյնը գեղեցիկ կապտականալ կը կազմէ:

Սեւանայ լիճը հարուստ է ձկնեղէնով. նշանաւոր է գեղարքունի ձուկը: — Բացի copti-cornu (ycauy), xpaжyш, бактакъ եւ այլ ձկներէն, կայ այն տեղ ընտիր կարմրախայտի զանազան տեսակներ: Չկնկիթն ածած ժամանակ՝ ձուկը առուակներու բերանը կը մտնէ եւ այս միջոցին կ'որսան զայն խորունկ թիի նման գործիքներով (ёсор, черпакъ): Իսկ լճի մէջ — ուռկաններով: — Լճի վրայ ձուկ որսալու իրաւունքը կառավարութեան կողմէն վարձու կը տրուի. այստեղի ձուկը կ'որսահանուի Երեւան, Եջմիածին, Տփղիս եւ այլուր, եւ մեծ հաճութեամբ կը գնուի: Արուեստական կերպով ձուկ աճեցնելու համար այս լիճն ամենամեծ յարմարութիւններ ունի:

Չնայելով որ այս բարձր լեռնագաւառի վրայ կիլիսն խիստ է եւ անընդհատ ձմեռ կ'անէ, Սեւանայ լիճը՝ ի բաց անաղ աւելի փակուած ջրային անցքերը, ձմեռուան ամբողջ տեւողութեանը մէջ չի սառիր. միայն շատ ցուրտ արած ժամանակ, երեսն ընդարձակ սառուցի կտորներ կը կազմուին:

Րուսականութեան կողմէ Սեւանայ լճի աւազանը շատ աղքատ է: Եղերքը մեծաւ մասամբ ժայռերէ եւ քարոտ լեռնակողերէ կը բաղկանայ, որոնց վրայ փոքր մնացած իսկ հազուագիւտ է: Միայն հովիտներուն մէջ կը տեսնուի բուսական կենդանութիւն:

Նոյն բանը կարելի է ասել նաեւ բնական լիճան համար: Լճի եզերքի վրայ ջրուցան հաստատուած են փոքրիկ գեղեր, որոնց մէջ կը բնակին գլխաւորաբար Հայեր եւ ապա Թուրքեր. կը գտնուին նաեւ Րուսներ, որոնց մեծազոյն մասն արքայաւոր են այնտեղ:

28 գետակ եւ առուակ կը թափուին Սեւանայ լճի մէջ, իրենց աղբիւրն ունենալով լճի

¹ Րուս հեղինակ սխալմամբ կը գրէ «Գեօղամ», եւ «Գեղարքունի», կարծելով. թէ այս բառերը իրենց արմատն ասան են Գեօկիւն անունէն, զոր կը գրէ Գիւրէ (Georg կամ Güg). ռուսներէ ռուսը թէ՛ է. թէ՛ չ. ու չ. (չ եւ ցի) կը հնչուի, ուստի կ'եղծաւորեն Գեօղարքունի իր մտանքէ Գիւրէ-ին, զոր այդ պարագայի մէջ Գիւրէ կը հնչէ: Իսկ «Սեւանայ», բառն ալ կը գրէ «Սեւան»,

² Հեղինակն այստեղ կ'աւելցնէ «Գուրգ» այս պատճառն է, որ լիճը ասած է իր Գուհա անունը՝ թուրքերէն Kukischa-Darie, որ կը նշանակէ — կապտաւ Գուհ, ուր որ այս վերին լաւին գրեթէ նշանակուած բառի բուն իմաստն է՝ Գեօղարքի Գուհ (Darie — Եւր), իսկ Գեօղարք թուրք. — երկայնի գետ, իրենց Գուհով գետ իմաստով:

աւագանը շրջապատող լեռնաշղթայի մէջ: Այս գետակներու մեծ մասին անուները թուրքերէն են Բալըք-չայ, Արդա-չայ, Շիշ-կանա, Ար-տաղ, Գէլըք-թաշ, Գէօշ չայ, Արի-եաման, Գիւղէլ-տէրէ, Ալաբէօլ, Կարասու, Կըրիւ-բուլաղ, Մաղլա եւ այլն: Կան նաեւ Արտամուշ, Ջիլ, Սիդ, Կետաղ եւ այլն: Բայց անշուշտ բաց ի պայտառակներէն կան նաեւ ուրիշ անթիւ աղբիւրներ, որոնց ջուրն վարէն ուղղակի լճի յատակը կը թափուին կամ ներքնապէս անտեսանելի կերպով կը հոսին լիճը: Սոցա մէջ կան ի հարկէ հանքային բովանդակութեամբ ջրեր ալ, որոնք կը բերեն լճի մէջ զանազան բնաւորական նիւթեր, ինչպէս որ անալիզը ցոյց կու տայ:

Սեւանայ լճէն մի գետ միայն դուրս կ'ենլէ, — Զնգու գետը, որ կը հոսի Գէպի ի Երեւան եւ կը թափուի Երասխայ մէջ: Զանգան կ'ուռոգէ մասամբ Կոր-Բայաղտի, Ելիֆանիի եւ Երեւանի գաւառները: — Զանգայի՝ լճէն դուրս հասած տեղւոյն մօտ, Ելիսովկա գիւղը կայ, ուր կը բնակին 1840 ին քաղաքուած եւ ռուսական եկեղեցիէն հերձեալ աղանդաւորներ, ինչպէս մալականներ եւ այլն: Այս Զանգա գետը մեր պատմութեան Հրազդանն է: Ըստ Ըօպէնի՝ այնտեղ Բօնի գիւղը հեմուրէն վերջ, երբ Հայք Արաբաց իշխանութեան ներքեւ էին, սոքա հոն թերին Արաբիայէն Զնգի կոչուած ցեղի գաղութանութիւն մի, որ նախնապէս Ափրիկէի արեւելեան եզերաց վրայ ի Զանգեւար կը բնակէր եւ անկից անցած էր Արաբիա: Այս այս Զնգ գերն իրենց անունը սուրհ Հրազդանին, որ այնուհետեւ Զանգա կոչումն առաւ: — Հրազդանի մէջ լը թափուին Բամիպ գաւառի սարերէն եւ Դաղփաճորէն (Դարաչիւազ) հոսող վտակները: Հրազդանի լայնութիւնն է 4—6 անգղ. ոտք եւ խորութիւնը մինչեւ 12 ոտք. իր ամբողջ երկարութիւնը 100 քիլոմետր է: Հրազդանի ջուրը մաքուր է եւ թափանցիկ, բայց առողջապար չէ: Համարուի, վասն զի շատ տեղեր մէջ լաւայի խոշոր կտորներ կան: Հրազդան սաստիկ արագահոս է Երեւանի մօտ:

Սեւանայ կղզին լճի հիւսիս-արեւմտեան կողմը կը գտնուի եւ կազմուած է ջրէն դուրս ջջուած բարձր եւ հաստաուուն ժայռերէն, եղբւրքէն 1 1/4 վէրստ (1315 մետր) հեռու: Այս կղզին, կը գրէ ռուս Տեղիւնարը Միտտէ, յարգուած է շնորհիւ իր վրայ ի հոսող հիմնուած արական վանքին, « յոյն-հայական արարողութեամբ », Պ. Միտտէ միշտ կը սխալի երբ Հայոց պատմութեան յիշատակութիւն մի կ'անէ: Այս-

պէս վանքի հիմնադրութեան համար կը գրէ. « Ըստ աւանդութեան Սեւանայ վանքը հիմնուած է ի Հայոց քրիստոնէութեան մուտքի սկիզբն, Յրդաս թագաւորի ժամանակ, 105 ին 6, Բ., Սէն Գրիգոր Դօպէն: « Բրիտոսիս ս. յարութեան », նուիրուած տաճար մի կանգնելով Ս. Գրիգոր ասու. « ս եւն », որ հայերէն կը նշանակէ այս վանք է: Այս անունը մնաց վանքի վրայ, ուսկից եւ տարածուեցաւ ամբողջ կղզւոյ վրայ: Յայտնի է, որ պ. երկրաշարի կը շփուի թէ թուականի եւ թէ հիմնադրի կոման մէջ: — Սեւանայ կղզին 800 մետր երկայնութիւն եւ ընդ ամենը 210 քիլոմետր տարածութիւն ունի: Դուրի եւ րեւելի 70 ոտք բարձր է: Ընդհին իր ժայռային կազմութեան՝ կղզին մերկ եւ անբեր է. միայն վանքի շինութեան մօտ՝ վանականներու աշխատութեամբ քանի մի տասնեակ ծառերով անտառակ մի շինուած է եւ վրք բանջարանոց մի: — Ս. Գրիգորին վերագրուած տաճարն այժմ կործանուած է եւ մինչեւ հիմայ ցոյց կու տան քարիղէն խաչ մի, որ Ս. Լուսարիշն է օծել: Այս հին տաճարէն քիչ հեռու, կղզւոյ ամենաբարձր տեղւոյ վրայ, հոյ իշխանի օրէրը Թեոփանի, նոր տաճար մի կանգնեց, որու մէջ թաղուած է ինքը: Այս տաճարը, որ կառուցուած է կանոնադրապէս տաշուած սեւ հրաբխային լավայի կտորներէ, մինչեւ հիմայ կանգուն կը մնայ շնորհիւ վանքի քանքերուն, թէեւ պաշտօն շատոց չի կատարուի այնտեղ: — Տաճարի քովերը կը տեսնուին նաեւ կիսաքանդ խղիկներ՝ ժայռերու մէջ փորուած՝ ուր կ'անցնեն եղբւ վանականներն իրենց միայնական ճպնաւորական կեանքը: — Վերջապէս 1654 ին, այս հին տաճարէն ոչ շատ հեռու, կղզւոյ արեւմտեան մասին վրայ, բայց աւելի ցած տեղ, նոր տաճար մ'ալ շինուեցաւ որուն կից կը գտնուին նաեւ խղիկներ վանականներու համար: Այս վերջին տաճարի մէջ մինչեւ հիմայ պլ պաշտօն կը կատարուի: Վանքի մէջ կը պահուին զանազան շատ հին պաշտօնագրեր (documents), ձեռագիրներ, գրքեր եւ թանկագին հին եկեղեցական զարդեր:

Սեւանայ վանքի կանոնադրութիւնը շատ խիստ է. կանայք եւ պատաններ ամենեւին իրաւունք չունին կղզին երթալու: Այս կղզին աւանականութեամբ բնակարան մ'է, հոս կ'ուղարկուին Ելիֆանի վանքէն ուղղութեան բերելու նպատակաւ, անհազանք կրօնաւորները միայն:

4.

Հանքաբան-երկրաչափ Միտտէ ընդարձակօրէն կը խօսի Սեւանայ լճի աւազանի երկրաբանական կազմութեան եւ աշխարհագրական գրից վրայ։ Ընդարձակ կը քննէ նաեւ լճի մակերևութի ցածրացած լինելը։ Յատուց բերելով իրմէ յառաջ այն կողմերն եկող եւրոպացի ճանապարհորդաց քննական տեսութիւններն եւ յիշատակելով վանքի մեծ աւորի։ 2. Բիւլբիւլեանցի եւ ուրիշ վանականաց անձնական փորձերով հաստատած վկայութիւնները, կ'ըզգուցանեն որ Սեւանայ լիճը պարբերաբար բերեալն է իրնէն եւ երբեմն կը բարձրանայ, որ սակայն ջրի զգալի նուազում յառաջ չի բերել։ Դադուս սիրիացի Սեւանայ լիճը բարձր հորիզոն ունէր, որ յետոյ սկսաւ իջնալ մինչեւ 1830. այնուհետեւ նորէն բարձրացաւ մինչեւ 40 ական թուականները։ Այս թուականն վերջ ջուրը դարձեալ իջաւ եւ 60 ական տարիներուն արդէն բարձրացած էր։ Այս վերջին բարձրացումն յետոյ սկսած է իջնել, որ կը շարունակուի մինչեւ մեր ժամանակները այնպէս, որ այժմ Սեւանայ լճի հորիզոնը զգալապէս խոնարհած է մինչեւ 2—3 մետր ցած։ Բայց անշուշտ չ'ուշանար բարձրանալու ժամանակն ալ։ Այս առթիւ Պ. Միտտէ կը համարէր Սեւանը նոյն երկրի միւս 2 լճերի, այսինքն Ռումիոյ Տոն Դախ կը հեքէ թէ այս երկրի մէջ ստորերկրեայ յարաբերութիւն եղած լինի, եւ ապա կ'ապացուցանէ թէ այս երկրովքը ընդհանուր առմէս փակ լճերու համար է։ Խօսելով վանի լճի վրայ կը յիշատակէ Լոփտուսի (Loftus) վկայութիւնը, ըստ որում Արձէշ քաղաքն՝ որ այժմ վանայ լճի հիւսիսային եզրերի վրայ է կանգնած, 1810 թ. լճի հորիզոնի բարձրացման շնորհիւ բաժնուեցաւ ցամաքէն, եւ ամբողջ 30 տարի բոլորովը պատած էր ջրով եւ իրեւկողի կը մնար։ յետոյ երբ ջուրն իջաւ, այն ժամանակ Արձէշ դարձեալ միացաւ ցամաքին։ — 1806 թ. վան քաղաքի քանի մի լճերէն ալ լճաւորը ջրով ողողուեցան եւ կտուց, Առտէր, եւ այլն, որոնք մինչեւ այն ատեն թերակողի էին, բոլորովն կտրուեցան ցամաքէն։ 1838—37 թ. վանայ լճի հորիզոնը ցածրացաւ, այնուհետեւ բարձրացաւ մինչեւ 1850, որմէ վերջ դարձեալ սկսաւ խոնարհել։ Վերոյիշեալ Արձէշ քաղաքն ըստ Լոփտուսի 1838 թ. միացաւ ցամաքին։ 1842 թ. վերստին կողիւցած էր. իսկ 1852 թ. Լոփտուս տեսաւ, որ քաղաքը միացեր է ցամաքին 150 մետր երկայնութեամբ մի տեղ պարանոցով։ Այս միջոցին լճի բարձրացած լինելը կը հաստատէ

նաեւ Շտրեկեր (Strecker) որ այն տեղերը կը քննէր 1846էն 1852 —։ Այս բարձրացումն ներս եւ խոնարհումներն իրենց թուականի կողմէն, քիչ շատ կը միաբանին Սեւանայ լճի խաղացմանց հետ։

Ռումիա լիճը 1811 թ. զգալապէս իջած էր, 1834—1847 բարձրացած. 1856 թ. նոյնպէս բարձր հորիզոն ունէր. 1857 թ. սկսաւ իջնալ մինչեւ 15 տարի, յետոյ նորէն սկսաւ բարձրանալ։ — 1886 թ. այս լիճն այնքան էր բարձրացած, ըստ Պաւլի (Pauli), որ ջրերը մինչեւ Ռումիոյ քաղաքը կը հասնէին։

Այս երեք մեծ լճերէն զատ, այն տեղի ուրիշ լճակներ, ինչպէս Արին, Առաչի եւ Ծովք (Գեօլիք) միեւնոյն ջրոյ խաղացումներն են կրած։

Այս խաղացմանց համար Պ. Միտտէ կը կարծէ թէ յառաջ եկած պէտք է լինին հետեւեալ պատճառներէ։ Երբ լճի աւազանը շրջապատող միջնորտը տարիներու որոշ թափ մի տեսողութեան միջոցին, յազեցած կը լինի ջրային շոգիացեալ մասնիկներով, որոնք կը պատճառեն ձիւն եւ անձրեւ, լճի հորիզոնը կը բարձրանայ եւ լճի ջրի աւելորդ մասն, որ դուրս կը թափուի եւ կը կազմէ Հրազդան գետն, կը հասնի իր առաջնութիւն։ Այնուհետեւ կու գայ հակառակ շրջանը, երբ միջնորտի մէջ խոնաւութիւնը պակաս է, անձրեւ եւ ձիւն պատճառող ջրային մասնիկները կը նուազին եւ լճի ջուրը կը սկսի շոգիանալ, որով եւ հորիզոնը կը ցածնայ, մինչեւ այն ժամանակ, որ միջնորտը կշտանայ եւ լեցընէ իր պակասը։ Յետոյ դարձեալ կը բարձրանայ եւ այլն։

Իր ընդարձակ քննութիւնը կը վերջացընէ պ. երկրաբանը սա եղբակցութեամբ, առ որ կը յանգէր իր ամբողջ աշխատութիւնը, թէ կատառելապէս կարելի է Սեւանի լճի ջրով ոռոգել կաւկասիան։

1889 եւ 1890 թ. այն տեղ ուղարկուած ուսումնական յանձնաժողովը քննեց միանգամայն թէ ի՞նչ քանակութեամբ ջուր կարելի է առնել լճէն, առանց նորա գոյութեան վնասելու։ — Հաշուած են, որ Հրազդան գետը մէկ երկվայրկնի մէջ լճէն կ'ընդունի 4,⁶ խորանարդ սաժէն կամ 44,⁷ խորանարդ մետր ջուր, որ ցոյց կու տայ թէ լիճը իր երեսի 0,48 սաժ. կամ 1,07 մետր թանձրութեան մէջ կը պարունակէ ամբողջ տարուան համար պաշար՝ 145 միլիոն խորան. սաժէն կամ 1408³ միլիոն մետր ջուր։ Ռումիոյ ոռոգուելու համար ընդ ամէնէն հարկաւոր է

տարեկան 6 միլ. իոր. սափէն միայն, ասել է $\frac{1}{2}$ 5 մասը, կամ լճի երեւի $1\frac{1}{2}$ '' (անգլ. inches) բարձրութիւնը:

Առաջադրութիւնը հիմնուելով այս քննութեանց վրայ նոր կանոններ հրատարակեց Վաւասարի Տոբեյն ուղղելու, որոնց գործարարութիւնը մեծ օգուտ պիտի բերէ երկրին:

Կ. ՏԻԻԻԲԱՆՍ

ՊԵՏԱԿԱՆ ԵՅՈՒՆԵՐԻՆԵՐԻՆԵ ՍՅԻ ԺԱՊԻՐ

«Միշտիւնի արքունական գրատան ծովագրական քարտէս», վերնագրով Schmeillerի գրած հաստիքն մէջ «Սև ծովն նոր այսպէս կոչուեցաւ», հարցումը՝ յօդուածագրին Eugen Geleichi նետապայ քննութիւնը կատարելու արդի տուած է, զոր համառոտելով կը թարգմանենք:

Ա.

Հետև. քան այս հարցման պատասխանել փորձելով՝ ձեռքս ուրիշ աղբիւր չունէի, բայց եթէ Brockhausի հանրագրութեան նորագոյն տպագրութիւնը, զոր օգնելով հետեւեալ տեղեկութիւնը գտայ, «... Այս կատաղի փոփոքեց, սովորաբար ձմեռը սաստիկ վտանգաւոր մէջ ու մտաւորաւ կ'ընկերանայ» որ նշնի իւր ցերեկ աստեղ հորիզոնը միտացնելուն՝ ծովուն Սև կոչուելուն պատճառ կ'ըլլայ: Այս անուն 1225 է ի վեր Մոնղոլաց եւ Թաթարաց, ԺԳ. դարէ ի վեր՝ Վենետիկաց եւ շինոյցաց սովորական է:», Տեղեկութեանս ինչ հեղինակութիւնէ առնուած ըլլալն նշանակուած էր: Fournier¹ այս նիւթոյս վրայ կը գրէ. «Տաճիկները Յոյներէն սորվեցան՝ ամէն խիստ ու անագորոյն բան՝ «Ե» կոչել: Լէ է Սև ծովը ծովահէններով եւ բաց աստի ձմեռը վտանգաւոր է եւ ասկէ առած է իւր անունը Pontus Euxinus = անագորոյն եւ «Սև ծով» յունարէն «Ե» - *εὐξείνος* կամ *ἄξεινος* = կատաղի (*farouche*): Տաճիկները սոյն ծովը Mauro Thalassa կը կոչեն. բայց կ'անուանուի միանգամայն Mer more կամ Mer naigre եւ noire:», — Fournier յունական բառին իմաստը հասկըցած է. Lütker իւր հանրագրի բառագրոց մէջ կ'ըսէ. «Արդի-հետեւ Սև ծովուն չորակայքն ի սկզբան անգաւազակ է թշնամի ազգեր կը բնակէին, Յոյք մ-հայն (*=* հիւրատես) կ'ընչին, մինչեւ որ յետոյ՝ 660 էն սկսեալ բազմաթիւ՝ գլխաւորաբար մեկնացի գաղթականք նշնը հիւրատեսը հիւրամեծար «Ե»-*εὐξείνος* կամ «Ե»-*εὐξείνος* (բարի «Ե»

առ հիւր կամ օտար» *ξένος*) ըրին:», B. la Martiniere¹ «Սև ծով անունը» հոն տիրող միջկիւնիւն եւ լաւ պատասխարեալ նաւահանգիստ չըլլալէն յառաջ եկած է, «կ'ըսէ. Rieccoliի կարծեաց համաձայն՝ այս անուն պատճառն է մեզն ու մաւսախուզը: — Վերջապէս յիշեց թէ այլեւայլ լեզուներով այս ծովս ինչ կ'անուանուէր յաշխատարութիւնս ԺԻ. դարուն: Rieccoli եւ P. Ferrarius² աղբիւրներէր կը հաստատեն թէ «այս ծովը կը կոչուէր հին յուն. Pontus Euxinus, գաղղիերէն՝ Mer noire կամ Mer majeur, իտալերէն՝ mare maggiore, գերմաներէն՝ schwarzze Zéle³, նոր յուն.՝ Mauro Thalassa, տաճիկերէն՝ Caradeniz եւ ռուսերէն Zorno more:»

Բայց որովհետեւ այսպիսի կշիռուր տեղեկութիւնք չեն կրնար խաղարկու եւ հետաքննին միտքը գոհացնել եւ Schmeillerի հարցման երրն ու ինչպէս անպատասխանի կը թողուն, ուրեմն հարկ է որ հնագոյն քարտիսաց եւ ձանապարհորդութեանց օժանդակութեան դիմելով՝ գտնելք թէ երբ, ինչպէս եւ ինչպիսի փոփոխութիւններով Սև ծովն իւր այժմեան անունը ստացած է: Բայց յառաջ քան մեր ձեռքն ունեցած առատ եւ բազմակողմանի նիւթերն մեր վախճանիկ հանելու համար կարգադրելով՝ ակնարկ մը ձգեցնք Սև ծովու պատմական աշխարհագրութեան վրայ:

Սև ծովուն նաւարկելի ըլլալուն պատմական ամենահին յիշատակարանն է Արգոնաւորաց արշաւանքը. Սև ծովը նոյն ժամանակ Pontus Aeneos կը յորդորուէր. մեր նոյն առաւելախառն ժամանակէն ունեցած աշխարհագրական տեղեկութիւնք մտադրութեան արժանի մանաւոր բան մը չունին: Ի դարուն սկիզբները ն. ք. զգս. այդ կողմերը հաստատուած յունական գաղթականութիւնք մայրենի երկրի հետ սերտ յարաբերութեան մէջ էին եւ բնականաբար այս յարաբերութեամբ աշխարհագրական տեղեկութիւնք այնպէս զարգացան, որ զարմանք չի պատճառեր՝ Հերոդոտոսի տեղեկութեանց ըստ բաւականի ճիշդ ըլլալը: Հերոդոտոսի յաջորդացին Արիստոտէլ, Պոլիբիոս, Դեոդորոս սիկիւիացի, Նիստոսթենէս, Հիպպարքոս եւ Ստրաբոն, որ մեզի Սև ծովն եւ սոյն ծովուն ափանց լիւրի երկրները կը ստորագրեն: Հռոմէական պետու-

¹ Dictionnaire géographique et critique. 2^e. t. A. Venise, 1737. էջ 268.

² Geogr. Philippus Ferrarius Alexandrinus. Patavii 1696. 2^o. Ա. էջ 254, 2^o. Բ. էջ 69.

³ Տարակոյս չկայ որ գերմաներէնը հունարէնէ հաճախ է:

¹ Zur historischen Geographie des Schwarzen Meeres. Von Eugen Geleichi. — Mittheilungen der k. k. geographischen Gesellschaft in Wien, 1889. Nr. 8 und 9.

² Hydrographie, Paris 1643, էջ 794.